14. Գործառնական և կազմակերպչական ծախքերի համար բաց թողած միջոցների ռացիոնալ ծախսելուց դոյացած տնտեսումի 50 տոկոսն անցնում է Փարզործարկումների կարգադրության տակ և ծախսվում է վերջինների կողմից տվյալ ձեռնարկի բանվորների սոցկենցադային կաթիլների վրա, առանձնապես հարվածայինների հատուկ նախահաշիվով:

Այդ տնտեսումը ծախսվում է տարեկան հաշվետվությունը վերադաս ապահովագրական գանձարկղի կողմից հաստատվելուց հետո:

Վճարման կայանի գործունեության շրջանակի մեջ մըտնում է՝

ա) փամանակավոր անաշխատունակության և լրացուցիչ նպաստների ապահովման ստացարկում

ա) Լուծում են Ժամանակավոր անաշխատունակության նրպասանների նշանակման ու վճարման հետ կապված բոլոր խնդիր-

ները և զեկավարում են ձեռնարկի ապարատի կողմից կատարելիք նպաստների հաշվակցման ու վճարման աշխատանքները:

բ) Հսկում են ժամանակավոր անաշխատունակության հետև-վանքով արձակուրդը ճիշտ տալու և ոգտադործելու վրա: Ուսում-նասիրում են հիվանդությունների պատճառները և պայքարի մի-ջոցառումներ են անցկացնում հիվանդությունները պակասեց-նելու համար առաջին ոգնության կաշանի և սանիտարական աեո-չության հետ միասին: Պայքարում են սխուլացիայի դեմ: Կադ-մակերպում են բանվորական ու բժշկական հոկողություն ժամա-նակավոր անաշխատունակության արձակուրդների վրա և մաս-նակցում են ԲՎՀ-ի ու ԲՆՀ-ի աշխատանքներին:

գ) Լուծում են բանվորներին և նրանց ընդանիքի անդամներին յերեխայի ոժիտի նպաստ ու սննդադրամ և թաղման նպաստ նշա-նակելու և վճարելու հետ կապված բոլոր խնդիրները:

բ) Թնշակավորման ապարիզում

ա) Լուծում են հաշմանդամների աշխատանքի մնացորդն ոգ-տադործելու խնդիրները վարչության և ֆարդործարկումի հետ միասին:

բ) Նշանակում են կենսաթոշակ տվյալ ձեռնարկի ապահովա-դրվածներին յերկարամյա ծառայության և հաշմության հետե-վանքով, նույնը նաև տվյալ ձեռնարկի մահացած բանվորների ու ծառայողների ընտանիքներին:

գ) Հսկում են տվյալ ձեռնարկում աշխատող թոշակառուներ-ի կենսաթոշակը ձեռնարկի կողմից վճարելու վրա, հաշվի առ-նելով նրանց աշխատավարձը:

դ) Սոց-կեցնադային ապաստիման ապարիզում

ա) Հետեւում են ապահովագրվածների բժշկական և պրո-ֆիլակտիկ սպասարկման դրվածքի վրա: Առողջապահական մար-մինների հետ միասին սահմանում են տվյալ ձեռնարկի բանվոր-ների բուժօգնության կազմակերպման պլանները և հսկում են կայանի նախահաշվով բուժօգնության համար բաց թողնված մի-ջոցների ծախսման վրա:

բ) Կազմակերպում են տվյալ ձեռնարկի բանվորների համար դեկտիկ սնունդ:

գ) Բաշխում են կուրորտների, սանատորիանների և հանգր-

տյան տների տոմսերը և մասնակցում են սան-կուրորտային ըն-տրիչ հանձնաժողովներում:

դ) Մասնակցում և հսկում են մսուրներ, մանկական հրա-պարակներ, մանկապարտեզներ, բաղնիքներ, կաթի խոհանոց-ներ կազմակերպելու վրա և միջոցներ են ձեռք առնում բարեւա-վելու այդ հիմնարկների աշխատանքները:

դ) Ապահովագրական մասսայական աշխատանքի ապարիզում

Կազմակերպում են ապահովագրական մասսայական աշխա-տանքները տվյալ ձեռնարկում, մասնավորապես՝

ա) Կազմակերպում են սոցիալական ապահովագրության նոր որենքների նախադների, կանոնների, հաշվետվությունների, ոտուգիչ ցուցանիչ թվերի քննությունը բանվորների ընդհանուր ժողովներում:

բ) Կազմակերպում են դասախոսություններ, դրույցներ, դե-կուցումներ, տեղեկատու սեղաններ և այլն, յոսաբանելով բոլոր աշխատանքները պատի թերթում և այլ հրատարակությունե-րում:

գ) Կազմակերպում են խմբակ սոցիալական ապահովագրու-թյունն ուսումնասիրելու համար:

դ) Ներդրավում են ապահովագրական պատգամավորներին և բանվորական ակտիվին պրակտիկ աշխատանքների մեջ և զեկա-վարում են նրանց աշխատանքները:

յ) Ֆինանսական աշխատանքի ապարիզում

ա) Հետեւում և հսկում են ապահովագրական մուծանքների կանոնավոր հաշվելու և լրիվ ու իր ժամանակին գանձելու վրա: Հետեւում են, վոր ձեռնարկը մուծանքների հաշվային փաստա-թղթերը իր ժամանակին ներկայացնի ապահովագրական գան-ձարկղին:

բ) Կազմում են վճարման կայանի ծախքերի նախահաշիվները և կարգադրում են նախահաշիվ նախատեսված միջոցները:

գ) Իր ժամանակին կազմում են և ներկայացնում են վերադաս ապահովագրական մարմնին հաշվետվություններ վճարման կայանի դործառնությունների մասին:

IV. ՅԵՐԿՐԱՅԻՆ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՅԵՎ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳԱՆՁԱՐԿՆԵՐ

15.— Յերկրային շրջանային և քաղաքային ապահովագրական գանձարկղներն սպասարկում են այն ձեռնարկներին ու հիմնարկներին ապահովագրվածներին (բացի յերկաթուղային ու ջրային տրանսպորտից), վորտեղ կազմակերպված էին վճարման կայաններ:

16.— Յերկրային շրջանային և քաղաքային ապահովագրական գանձարկղների վրա դրվում է՝

ա) Հիմնարկների, ձեռնարկների և տնտեսությունների ցուցակագրումն ու տարիֆիկացիան:

բ) Ապահովագրական մուծանքների և նպատակային հատկացումների գանձումը:

գ) Նպաստների ու կենսաթոշակների նշանակումն ու վճարումը:

դ) Առքաթիւնների հետ միասին ապահովագրվածներին բուժադրոֆիլակտիկ ոգնության կազմակերպումը և ծրագրերի մշակումը, նաև հսկողությունն ապահովագրվածների բուժօգնության համար սոցապահովագրության բյուջէյի մասնադրած միջոցներն իր իսկական նպատակին ոգտագործելու վրա: Հսկողությունն բժշկական ոգնության պատշաճ դրվածքի վրա:

ե) Ուսումնասիրությունն հիվանդությունների պատճառների և առողջապահական ու աշխատանքի սանիտարական տեսչության հետ միասին հիվանդությունները պակասեցնելու համար միջոցառումների ձեռնարկում:

զ) Ժամանակավոր անաշխատունակության արձակուրդներ տալու և ոգտագործելու վրա բժշկական և բանվորական հսկողության կազմակերպում և պայքար սիմուլյացիայի դեմ:

ը) Մասնակցում են բժշկական եքսպերտ մարմինների աշխատանքներին և հսկում են այդ մարմինների աշխատանքների վրա, իսկ այն վայրերում, ուր բժշկական եքսպերտ մարմինները դրանք չեն, ապահովագրական գանձարկղներին հսկողության տակ, անմիջականորեն հսկում և ղեկավարում են այդ մարմինների աշխատանքները:

թ) Կադրերի տեղական վարչությունների հետ միասին լուծում են հաշմանդամների մնացորդ աշխատանքի ոգտագործման հետ կապված խնդիրները:

ժ) Մասնակցում են ապահովագրվածների կենցաղն սպասարկող հիմնարկների կազմակերպմանը (մանկական մսուր, հրապարակ, կաթի խոհանոց և այլն) և միջոցներ են ձեռնարկում նրանց աշխատանքների բարելավման համար:

ի) Բաշխում են կուրորտներին, սանատորիաներին և հանգստյան տներին տոմսերը և մասնակցում են սանկուրորտային ընտրիչ հանձնաժողովներին:

լ) Կազմակերպում են մասնագիտական աշխատանքներ և ապահովագրական լուսավորություն:

խ) Ապահովագրական աշխատավորների հաշվառումը, բաշխումն ու պատրաստումը:

V. ՅԵՐԿՐԱՅԻՆ ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ
ԳԱՆՁԱՐԿՆԵՐ

17.— Յերկրային նահանգային ապահովագրական գանձարկղների գործունեյության շրջանակի մեջ մտնում են՝

ա) Ցանցի կազմակերպումը և ղեկավարությունն ու հսկողությունը յերկրային շրջանային ու քաղաքային ապահովագրական գանձարկղներին և մասնաճյուղային սիստեմայի մեջ չմանող ձեռնարկային վճարման կայանների գործունեյության վրա:

բ) Ցուցակագրումն ու տարիֆիկացիան այն ձեռնարկների, վորտեղ կազմակերպված են վճարման կայաններ և այդ ձեռնարկներից ապահովագրական մուծանքների ու նպատակային հատկացումների գանձումը:

գ) Յերկրային գանձարկղների միջոցների կարգավորումը:

դ) Վերանայումն ու հաստատումը յերկրային գանձարկղների և յենթակա վճարման կայանների նախահաշիվների և ֆին-վիճակագրական հաշվետվությունների:

ե) Նահանգային սոցապահովագրության բյուջէյի կազմելն ու նրա կատարման ընթացքի վրա հսկելը:

զ) Յերկրային ստորագրատ ապահովագրական գանձարկղների և վճարման կայանների բյուջէների ու կայուն նախահաշիվների հաստատելը:

ը) Տարիֆիկացիայի և ապահովագրական մուծանքների գանձման ղեկավարությունը նահանգում:

թ) Նահանգի Առքաթնի հետ միասին ապահովագրվածների բուժադրոֆիլակտիկ ոգնության կազմակերպումն ու ծրագրերի մշակումը և հսկողությունն՝ ապահովագրվածների բուժօգնության

համար սոցապահովագրության բյուջեյից մասնադրած միջոցներն էր իսկական նպատակին ոգտագործելու վրա :

ժ) Ապահովագրվածների պրոֆիլակտիկ և կենցաղային սպասարկման ասպարիզում սոցիալապես ապահովագրական դանձարկըղները գործունեություն պլանավորումն ու ղեկավարությունը :

ի) Հանգստյան տները, սանատորիաների և աշխատանքի հաշմանդամները համար հիմնարկների կազմակերպումն ու կառավարումը :

լ) Ապահովագրվածների հիվանդությունների ուսումնասիրությունը, ժամանակավոր անաշխատունակություն արձակուրդներ տալու վրա բժշկական ու բանվորական հսկողության կազմակերպումը և հիվանդությունների ու արավմատիզմի իջեցման համար միջոցառումների մշակումը :

խ) Հաշմանդամների բժշկական եքսպերտիզան, աշխատանքային տեղավորում ու վերապատրաստումը կազմակերպելու խնդիրների մշակումը և նրանց կենցաղային բյուրոարկումը :

ծ) Ապահովագրական լուսավորության և մասսայական աշխատանքների կազմակերպումը :

կ) Սոցիալական ապահովագրության որոնքներն ու կանոնները կիրառելու մասին պարզաբանումներ տալը :

հ) Յերկրային ապահովագրական դանձարկըղների և յենթակի վճարման կայանների գործողությունների դեմ բողոքների վերանայումը :

ձ) Ապահովագրական աշխատավորների հաշվառումը, բաշխումն ու վերապատրաստումը :

VI. ԳԱՇՆԱԿԻՑ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՐԿՐԱՅԻՆ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳԱՆՁԱՐԿՆԵՐ

18.— Դաշնակից հանրապետությունների հանրապետական ապահովագրական դանձարկըղների գործունեությունը ընդհանուր ղեկավարություն իրագործվում է հանրապետական արհմիությունների խորհուրդների, իսկ ԱՍՖՍՀ-ում ՀՍՄԿԽ-ի կողմից :

19.— Դաշնակից հանրապետությունների հանրապետական ապահովագրական դանձարկըղները հանդիսանում են ինքնուրույն հիմնարկներ, վորոնք մտնում են դաշնակից հանրապետությունների աշխատանքի մարմինների սիստեմայի մեջ և գործում են տվյալ հանրապետական Աշխտոդկոմատի և ԽՍՀՄ Աշխտոդկոմատի կողմից արված դերեկառվների հիման վրա, յենթարկվելով իրենց

Ֆինանսական ուղերատիվ գործունեությունը մանիջականորեն սոցապահովանությունը :

20 — Այն բոլոր հարցերով, վորոնք պահանջում են դաշնակից հանրապետության կառավարության լուծումը, հանրապետական ապահովագրական դանձարկըղները դիմում են կառավարությանը, դաշնակից հանրապետության Աշխտոդկոմատի կողմից :

21.— Դաշնակից հանրապետությունների հանրապետական ապահովագրական դանձարկըղների գործունեությունը շրջանակի մեջ մտնում են՝

ա) Ցանցի կազմակերպումը և ղեկավարությունն ու հսկողությունը մասնաճյուղային սիստեմայի մեջ չմտնող յերկրային ապահովագրական մարմինների գործունեությունը վրա :

բ) Սոցիալական ապահովագրության հանրապետական բյուջեյի կազմին ու նրա կատարման ընթացքի վրա հսկելը :

գ) Հանրապետական հատվածով յերկրային դանձարկըղների սոցիալական ապահովագրության ֆինանսական սղանի կազմին ու ֆոնդերի կարգավորելը :

դ) Տարիֆիկացիայի և ապահովագրական մուծանքների դանձման ղեկավարությունը հանրապետություններում :

ե) Այն հանրապետություններում, ուր նահանգային բաժանում չկա, այն ձեռնարկների ցուցակագրումն ու տարիֆիկացիան, վորտեղ կազմակերպված են վճարման կայաններ, այլև այդ ձեռնարկներից ապահովագրական մուծանքների և նպատակային հատկացումների դանձումը :

զ) Յերկրային ապահովագրական մարմինների հաշվառման և հաշվետվության կազմակերպումն ու ղեկավարումը, նրանց ֆինանսական հաշվետվությունների հաստատելը և ֆինվիճակագրական հաշվետվությունների ու միացյալ բաշխի կազմելը :

ը) Դաշնակից հանրապետության Աշխտոդկոմատի հետ միասին ապահովագրվածների բուժողությունը համար սոցապահովագրության բյուջեյից մասնադրած հանրապետական միջոցների ծախսման կարգ սահմանելն ու այդ միջոցներն էր իսկական նպատակին ոգտագործելուն հսկելը :

թ) Ապահովագրվածների պրոֆիլակտիկ և կենցաղային սպասարկման ասպարիզում յերկրային սոցապահովագրության մարմինների գործունեությունը պլանավորումն ու ղեկավարությունը :

ժ) Հանրապետական նշանակութիւն ունեցող պրոֆիլակտիկ հիմնարկների անմիջական կառավարելը:

բ) Ապահովագրվածների հիվանդութիւնների ուսումնասիրութիւնը, ժամանակաւոր անաշխատունակութեան արձակուրդներ տալու վրա բժշկական ու բանվորական հսկողութիւն կազմակերպելը և հիվանդութիւններն ու տրամադրւած իշխցնելու համար միջոցառումներ մշակելը:

գ) Հաշմանդամների բժշկական եքսպերտիզան, աշխատանքային տեղավորումը և վերապատրաստումը կազմակերպելու խընդիմները մշակումը և նրանց կենցաղային սպասարկումը:

դ) Սոցիալական ապահովագրութեան գործող որենսդրութեան հիման վրա կանոնների, հրահանգների, պարզաբանումների հրատարակումը, այլ և հսկողութիւն տեղերում նրանց անցկացնելու վրա:

ե) Ապահովագրական աշխատատեղերի հաշվառումը, բաշխումն ու պատրաստումը, ապահովագրական լուսավորութեան և պրոպագանդայի կազմակերպումը:

զ) Յերկրային ապահովագրական մարմինների գործողութիւնների դեմ բողոքների քննութիւնը:

VII. ՄԱՍՆԱՅՑՈՒՂԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳԱՆՁԱՐԿՆԵՐ

22.— Հանրապետական կենտրոնական մասնաճյուղային գանձարկներ կազմակերպվում են ժողովրդական տնտեսութեան հետեւյալ ճյուղերում՝

ա) Մետաղագործական արդյունաբերութիւնում (սև և դուռնաւոր մետաղագործութիւն):

բ) Հանքային արդյունաբերութիւնում:

գ) Հիմնական քիմիական արդյունաբերութիւնում:

դ) Ածխային արդյունաբերութիւնում:

ե) Մեքենայինարարութիւնում (ավտո, ավիո, տրակտորային և տրանսպորտային, խոշոր ու միջակ մեքենայինարարութիւն):

զ) Յերկաթուղային տրանսպորտում:

ը) Զբոսային տրանսպորտում:

23.— Համամիութենական կենտրոնական մասնաճյուղային ապահովագրական գանձարկներն իրենց գործունեութեամբ անմիջականորեն յենթարկվում են սոցալկենսովարչութեանը, հանգիստանում են ինքնուրույն կազմակերպութիւն, ոգտվում են դաշ-

նակից հանրապետութիւնների յերկրային հանրապետական գանձարկների բոլոր իրավունքներով և իրազործում են սոցալահովագրութիւնը՝ սոցալկենսովարչութեան կողմից հաստատված բյուջեների հիման վրա:

24.— Զբոսայի թիւով արդյունաբերութեան միատեսակ ճյուղի ձեռնարկներ ունեցող հանրապետութիւններում և նահանգներում, համաձայն արհմիութենական միջին ողակներ կազմակերպելու սկզբունքի, կարող են ստեղծվել հանրապետական կամ նահանգային սոցալահովագրութեան մասնաճյուղային գանձարկներ:

25.— Արդյունաբերութեան տվյալ ճյուղի կամ տրանսպորտի Համամիութենական մասնաճյուղային ապահովագրական գանձարկի գործունեութեան չրջանակի մեջ են մտնում՝

ա) Ցանցի կազմակերպումը և ստորադաս ապահովագրական մարմինների գործունեութեան ղեկավարութիւնն ու հսկողութիւնը:

բ) Մասնաճյուղային գանձարկի ընդգրկած ապահովագրութեան ապահովութեան համամիութենական բյուջէի մշակումը:

գ) Ստորադաս ապահովագրական կազմակերպութիւնների բյուջեների նախահաշիւների և ֆինանսական հաշիւավութեանների հաստատումը:

դ) Սոցիալական ապահովագրութեան միջոցների կարգավորումը:

ե) Յերկաթուղային և ջրային տրանսպորտում՝ տարիֆիկացիայի և ապահովագրական մուծանքների գանձման ղեկավարութիւնը:

զ) Հաշվառման և հաշիւավութեան կազմակերպումն ու ղեկավարութիւնը, սոցիալական ապահովագրութեան ֆին-վիճակագրական հաշիւավութիւնների և միացյալ բալանսների կազմելը:

ը) Արդյունաբերութեան տվյալ ճյուղի կամ տրանսպորտի կոնկրետ, առանձնահատուկ պայմանների համեմատ սոցիալական ապահովագրութեան որենքներն ու կանոնները կիրառելու համար հրահանգների և պարզաբանումների հրատարակումը:

թ) Առողջապահութեան մարմինների հետ միասին արդյունաբերութեան տվյալ ճյուղի կամ տրանսպորտի ապահովագրվածների համար բուժողութիւնը պլանավորելու, կազմակերպելու և բուժողութեան միջոցներն ոգտագործելու հետ կապված խընդիմների մշակումը:

գ) Հիվանդությունների ուսումնասիրությունը և սոցալկենսա-վարչության կողմից հրատարակած կանոնադրության հիման վրա արդյունաբերության տվյալ ճյուղի կամ տրանսպորտի ապահովա-դրվածների բժշկական և բանվորական հսկողության կազմակեր-պումը:

բ) Պրոֆիլակտիկ ուղնություն պլանավորումն ու ղեկավարու-թյունը:

ը) Տվյալ արդյունաբերության կամ տրանսպորտի բանվորնե-րի կենցաղային սպասարկման գործունեյության կազմակերպումն ու պլանավորումը:

իս) Մասսայական աշխատանք և ապահովագրական լուսավո-րություն:

ծ) Ստորագաս ապահովագրական կազմակերպությունների գործողությունների դեմ ապահովագրվածների բողոքները լուծու-մը:

26. Հանրապետական կամ նահանգային մասնաճյուղային, իսկ յերկաթուղային և ջրային տրանսպորտում շրջանային ա-պահովագրական գանձարկղների գործունեյության շրջանակի մեջ մտնում են՝

ա) Տվյալ մասնաճյուղային գանձարկղի կողմից սպասարկվող ձեռնարկային վճարման կայանների աշխատանքների ղեկավարու-թյունը:

բ) Հանրապետական կամ նահանգային, իսկ յերկաթուղային և ջրային տրանսպորտում շրջանային բյուջեների, նախահաշիվ-ների ու հաշվետվությունների կազմելը և վճարման կայանների նախահաշիվների ու հաշվետվությունների հաստատելը:

գ) Առողջապահության մարմինների հետ միասին ապահո-վագրվածների բուժսրոֆիլակտիկ ուղնություն կազմակերպելն ու պլանների մշակելը՝ ապահովագրվածների բուժօղնության համար պլանների մշակելը՝ ապահովագրության բյուջեյից մասնադրված միջոց-ների իրենց իսկական նպատակի համար ոգտագործելուն և ապա-հովագրվածների բուժօղնության պատշաճ դրվածքի վրա հակելը:

դ) Հսկողություն ժամանակավոր անաշխատունակության արձակուրդներ տալու և ոգտագործելու վրա, հիվանդություն-ների բարձրացման պատճառները ուսումնասիրությունը, պայքար-սիմուլյացիայի և սրբողունների դեմ, ժամանակավոր անաշխա-տունակության արձակուրդների վրա բժշկական և բանվորական

հսկողության կազմակերպումը և հիվանդությունների ու տրապ-մատիզմայի իջեցնելու համար միջոցների ձեռնարկումը:

ե) Մասնակցություն ապահովագրվածների կենցաղն սպասա-կող հիմնարկների կազմակերպմանը (մանկական մսուրներ, դի-տիկ ճաշարաններ, կաթի խոհանոցներ և այլն):

զ) Մասսայական աշխատանք և ապահովագրական լուսա-վորություն:

ը) Վճարման կայանի գործողությունների դեմ ապահովա-գրվածների բողոքների քննությունը:

Բացի նշված սլաքտականություններից շրջանային յերկաթու-ղային և ջրային ապահովագրական գանձարկղների վրա դրվում է.

թ) Ձեռնարկների, հիմնարկների և անտեսությունների ցու-ցակազրումն ու տարիֆիկացիան:

ժ) Ապահովագրական մուծանքների և նպատակային հատկու-ցումների գանձումը:

ի) Նպատակների և կենսաթոշակների նշանակումն ու վճարումը:

լ) Հսկողություն ժամանակավոր անաշխատունակության ու լրացուցիչ տեսակի նպաստների և աշխատող հաշմանդամների կենսաթոշակները ձեռնարկի կողմից ճիշտ հաշվակցման և վը-ճարման վրա:

խ) Կադրերի համապատասխան վարչությունների հետ միասին հաշմանդամների մնացորդ աշխատանքն ոգտագործելու հետ կապ-ված խնդիրների լուծումը:

ծ) Սոցիալական ապահովագրության տվյալ շրջանային յեր-կաթուղային կամ ջրային գանձարկղի գործունեյության շրջանում գտնվող սրբֆիլակտիկ հիմնարկների կառավարումը:

կ) Կուրորտային և սանատորիական բուժման համար հիվան-դությունների ընտրության մասնակցությունը:

VIII. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ՎԱՐՁՈՒԹՅԱՆ (ՍՈՑԱՊԿԵՆՏՎԱՐՁ) ՅԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԳ
(ՍՈՑԱՊՄԻՈՒԹԽՈՐՀ)

27. Սոցիալական ապահովագրության կենտրոնական վար-չությունը գործում է ԽՍՀՄ Աշխտողկոմատի կողմից հաստատ-ված կանոնադրության հիման վրա:

28. Սոցիալական ապահովագրության միութենական

խորհուրդը գործում է իր մասին դոյություն ունեցող կանոնադրութեան հիման վրա:

IX. ՅԵՐԿՐԱՅԻՆ ՅԵՎ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԱՅԻՆ ԳԱՆՁԱՐԿՂՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

29.— Հանրապետական և նահանգային յերկրային ապահովագրական գանձարկղներն իրագործում են տվյալ տերրիտորիայում գտնվող մասնաճյուղային ապահովագրական կազմակերպութեաններին դործունեութեան վրա ընդհանուր հսկողութեանը, ոգնութեան և հասցնում նրանց իրենց աշխատանքներում:

Ծանոթութիւն.— Մասնաճյուղային ապահովագրական մարմինների վորոշումները կարող են փոխվել միմիայն վերադաս մասնաճյուղային գանձարկղների կողմից:

30.— Շրջանային և քաղաքային յերկրային ապահովագրական գանձարկղների վրա յե դրվում մասնաճյուղային գանձարկղների նորմաներով այն մանր ձեռնարկների սպասարկումը, վորտեղ մասնաճյուղային վճարման կայաններ չեն կազմակերպված, ըստ վորի այդ ձեռնարկների նկատմամբ մասնաճյուղային գանձարկղներին իրավունք է վերապահվում հետևելու իրենց ղերեկտիվների կատարման վրա:

X. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳԱՆՁԱՐԿՂՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՐԽԻՆՆԵՐԻ ՀԵՏ

31.— Սոցիալական ապահովագրութեան մարմիններն աշխատում են համապատասխան արհմիութենական կազմակերպութեաններին ընդհանուր ղեկավարութեամբ՝ սոցիալական ապահովագրութեան մասին գործող որենսդրութեան, արհմիութենական համագործակցության վորոշումների և ԽՍՀՄ ու դաշնակից հանրապետութեանների Աշխտողկոմատների ղերեկտիվների հիման վրա:

32.— Սոցիալական ապահովագրութեան մարմիններն իրենց բոլոր հիմնական միջոցառումներն անց են կացնում կյանքում նախորդ համաձայնեցնելով համապատասխան արհմիութենական կազմակերպութեաններին հետ:

Մասնավորապես յենթակա յեն արհմիութենական կազմակերպութեաններին պարտադիր կարգով ի քննութեան ներկայացնելու (իսկ «Ա», «Գ» և «Ե» կետերով ի հաստատութեան).

ա) Ապահովագրվածների ապահովութեան կանոնները:

բ) Սոցիալական ապահովագրութեան պերսպեկտիվ պլանները և անուշիչ թվերը:

գ) Ապահովագրվածների սպասարկման կարգը:

դ) Հանրապետական և նահանգային ապահովագրական գանձարկղների բյուջեներն ու նախահաշիվները:

ե) Ապահովագրվածներին պրոֆիլակտիկ և սոցիկենցադային հիմնարկներ (հանգստյան տներ, սանատորիաներ և կուրորտներ) ուղարկելու նորման, կանոններն ու կարգը:

զ) Ապահովագրական լուսավորութեան, մասսայական աշխատանքների և ապահովագրական կարգեր պատրաստելու պլանները:

33.— Համապատասխան արհմիութենական կազմակերպութեանների բոլոր վորոշումները, յեթե նրանք չեն հակասում սոցիալական ապահովագրութեան որենսդրութեանը, հաստատված բյուջեին, այլ նաև վերադաս սոցապահովագրական մարմինների վորոշումներին, — յենթակա յեն համապատասխան ապահովագրական կազմակերպութեանների կողմից պարտադիր կատարման:

34.— Դաշնակից հանրապետութեանների Աշխտողկոմատները և աշխատանքի տեղական մարմինները իրագործում են ղեկավարութեանն ու ստուգումն ապահովագրական գանձարկղների գործողութեաններին որինականութեան և նրանց կողմից վերադաս մարմինների կարգադրութեանների կատարման վրա:

Ապահովագրական գանձարկղներին վոչ որինական գործողութեանները դաշնակից հանրապետութեանների Աշխտողկոմատներն ու աշխատանքի տեղական մարմինները կանգնեցնում և Յ որվա ժամկետում այդ մասին հայտնում են ի ղիտութեան վերադաս ապահովագրական մարմին, վորի վորոշումը համարվում է վերջնական:

35.— Դաշնակից հանրապետութեանների Աշխտողկոմատներին և աշխատանքի տեղական մարմիններին, ապահովագրական գանձարկղների գործունեութեան վրա հսկողութեան փաստացի իրագործման հնարավորութեան տարու նպատակով, գանձարկղները պարտավոր են ներկայացնել դաշնակից հանրապետութեանների Աշխտողկոմատներին կամ աշխատանքի տեղական մարմիններին:

ա) Աշխատանքի ծրագրերը և հաշվետվութեաններ նրանց կատարման մասին:

բ) Ֆինանսական հաշվետվութեաններ և ղեկուցումներ բյուջեին կատարման մասին:

դ) Իրենց կողմից հրատարակված հրահանգները, չբնութագրող և այլ ընդհանուր կարգադրությունները:

դ) Գանձարկղի կոմիտեյի նիստերի արձանագրությունները, այլ և վերստուգելի հանձնաժողովի արձանագրություններն ու ակտերը:

XI. ՄՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

36.— Ապահովագրական դանձարկղների միջոցները կազմվում և ծախսվում են համաձայն «սոցիալական ապահովագրության ֆոնդերի կանոնադրության»:

37.— Ապահովագրական դանձարկղի կոմիտեյի նախագահի վրա անհատական պատասխանատվություն և դրվում միջոցների ճիշտ ծախսման համար:

Սոցապահովագրության միջոցների ծախսման հետ կապված խնդիրների առթիվ կոմիտեյի վոչ որինական վորոշումները նախագահն անց չի կացնում կյանքում, վորի մասին հայտնում է վերադաս սոցապահովագրության մարմինն և համապատասխան արհմիութենական կազմակերպությանը:

XII. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳԱՆՁԱՐԿՂՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՑՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՈՒ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԿՐԳՐ

38.— Յերկրային և մասնաճյուղային ապահովագրական դանձարկղների կոմիտեներն իրենց գործունեությունը մասին հաշվետվություն են տալիս սոցիալական ապահովագրության վերադաս մարմինների, համապատասխան արհմիութենական կազմակերպությունների և աշխատանքի մարմինների առաջ:

39.— Ապահովագրական մարմինների գործունեությունը յենթակա յե ստուգման վերստուգիչ հանձնաժողովների կողմից, — ընտրված նույն կարգով և նույն ժամկետով՝ ինչպես վոր բնորոշում են ապահովագրական Գանձարկղների կոմիտեները: Նույնպես յենթակա յեն ստուգման և հսկողության սոցապահովագրության վերադաս մարմինների կողմից:

40.— Ապահովագրական դանձարկղները վերստուգիչ հանձնաժողովները գործում են ՀԱՄԿԻ-ի հետ համաձայնեցրած սոցապահովագրության հրատարակած կանոնադրության 4-րդ և 5-րդ հոդվածներով:

41.— Վերադասում են.

ա) Սոցիալական ապահովագրության միութենական խորհուրդի 1928 թ. հունիսի 21-ից № 415 վորոշումը սոցիալական ապահովագրության տեղական մարմինների որինակելի կանոնադրության հաստատման մասին:

(ԽՍՀՄ Աշխոդկոմատի տեղեկատու, 1928 թ. № 34-35):

բ) Որինակելի կանոնադրության սոցիալական ապահովագրության մարմինների մասին՝ հաստատված սոցիալական ապահովագրության միութենական խորհուրդի կողմից 1928 թ. հունիսի 21-ին № 416 (ԽՍՀՄ Աշխոդկոմատի տեղեկատու, 1928 թ. № 34-35):

գ) ԽՍՀՄ Աշխոդկոմատի 1930 թ. մարտի 10-ից № 102 վորոշումը տրանսպորտի ապահովագրական դանձարկղները դաշնակից հանրապետությունների Աշխոդկոմատների Սոցապահովագրության կանոններին հանձնելու մասին (ԽՍՀՄ Աշխոդկոմատի տեղեկատու, 1930 թ. № 11):

դ) ԽՍՀՄ Աշխոդկոմատի 1930 թ. մայիսի 21-ից № 185 վորոշումն ապահովագրական դանձարկղների և աշխատանքի մարմինների ու Աշխոդկոմատի համապատասխան մարմինների վորհահարակերությունների մասին (ԽՍՀՄ Աշխոդկոմատի տեղեկատու, 1930 թ. № 19):

յե) ԽՍՀՄ Աշխոդկոմատի 1931 թ. ապրիլի 20-ից № 99 վորոշումը յերկաթուղային տրանսպորտի աշխատավորների համար սոցիալական ապահովագրության Համամիութենական կենտրոնական դանձարկղ կազմակերպելու և տրանսպորտի համապատասխան ապահովագրական դանձարկղներին նրանց հանձնելու մասին:

(ԽՍՀՄ Աշխոդկոմատի տեղեկատու, 1931 թ. № 3):

զ) ԽՍՀՄ Աշխոդկոմատի սոցապահովագրության 1931 թ. ապրիլի 21-ից № 100 հրահանգը յերկաթուղային տրանսպորտի սոցիալական ապահովագրության դանձարկղը յերկաթուղային տրանսպորտի աշխատավորների սոցիալական ապահովագրության Համամիութենական կենտրոնական դանձարկղին հանձնելու մասին (չհրատարակված), բացառությամբ հրահանգի 3, 4, 5, 6, և 9 հոդվածների:

ԽՍՀՄ Աշխատանքի Ժողովրդական կոմիտեի տեղակալ՝ ԿՐԱՎԱԼ

ԽՍՀՄ Աշխոդկոմատի կոլլեգիայի անդամ՝ ԿՈՏՈՎ

Վ Ո Ր Ո Յ ՈՒ Մ

ԽՍՀՄ ԱՇԽԱՏԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

1931 թ. հունիսի 26-ից № 169.

Ժամանակավոր անաշխատունակության նպաստի չափերի մասին

ի դարձացումն ԽՍՀՄ ԿԳԿ-ի և ԺԿՍ-ի 1931 թ. հունիսի 23-ի «Սոցիալական ապահովագրության մասին» վորոշման 1-ին հատվածի Սոցիալական Ապահովագրության Համամիութենական խորհուրդը վորոշում է. —

1. 1931 թ. հունիսի 23-ի որենքով սահմանված ժամանակավոր անաշխատունակության նպաստի նոր չափերը գործադրության են դրվում 1931 թ. հուլիսի 1-ից: Այդ չափերը կիրառվում են նպաստի վճարման բոլոր դեպքերում սկսած 1931 թ. հուլիսի 1-ից, թեկուզ իսկ վճարումը կատարվելիս լինի մինչև 1931 թ. հուլիսի 1-ը տեղի ունեցած ժամանակավոր անաշխատունակության համար:

2. Լրիվ տարին աշխատող, բայց տվյալ ձեռնարկում տարուց պակաս աշխատած կառուցողների թվին են դասվում (1931 թ. 23/6-ի որենքի 5-րդ հոդվածի «Բ» կետը) այն կառուցող բանվորները, վորոնք վերջին 13 ամսվա ընթացքում մինչև անաշխատունակության վրա հասնելը վարձու աշխատել են զանազան ձեռնարկներում կամ ընդհատումով մի ձեռնարկում վոչ պակաս քան 12 ամիս: Այդ ժամանակից պակաս աշխատած կառուցող բանվորներն (արհմիության անդամ) անաշխատունակության ամբողջ ժամանակի համար նպաստ են ստանում իրենց դատումի յերկու յերրորդականի չափով (1931 թ. հունիսի 23-ի որենքի 6-րդ հոդվ.):

3. Բ. Գ. Կարմիր Բանակում կամ ուսմանը նվիրված յեղած ժամանակը չի ընդհատում նպաստը բարձրացնելու իրավունք տվող անընդհատ աշխատանքի ստաժը, բայց այդ ժամանակը վարձու աշխատանքի մեջ է մտնում այն դեպքում միայն, յերբ այդ ժամանակամիջոցի ընթացքում աշխատավարձը պահպանված է յեղել (լրովին կամ մասամբ):

4. Համայնացրած սեկտորի աշխատավորներին, վորոնք ըստ իրենց աշխատանքի բնույթի չեն կարող արհմիության անդամ լինել

(ոսպականացրած պահակամբի անդամներ, հրացանավորներ և այլն) նպաստը վճարվում է արհմիության անդամների համար սահմանված չափերով:

5. Ժամանակավոր անաշխատունակության ապահովման նկատմամբ բանվորներից առաջնությունը առաջ քաշման որից 3 տարվա ընթացքում հավասարեցվում են այն ձեռնարկի բանվորներին, վորտեղից նրանք առաջ քաշված են յեղել:

6. Մասնավոր վարձարկների (նույն թվում և կոնցեսիոն ձեռնարկներում) մոտ վարձու դրադված աշխատավորներին ժամանակավոր անաշխատունակության նպաստ վճարվում է հետևյալ չափերով:

ա) Մեկ տարուց վոչ պակաս արհմիության անդամ յեղողներին առաջին 20 որացուցալին որվա համար դատումի 2/3-ի չափով, իսկ հետո լրիվ աշխատավարձի չափով:

բ) Մեկ տարուց պակաս արհմիության անդամ յեղողներին դատումի 2/3-ի չափով անաշխատունակության ամբողջ ժամանակի համար:

գ) Արհմիության անդամ յեղողներին—անաշխատունակության ամբողջ ժամանակամիջոցի համար դատումի 1/2-ի չափով:

7. Բոլոր դեպքերում ժամանակավոր անաշխատունակության նպաստը չի կարող գերազանցել սահմանված առավելագույն չափից:

Սոցիալական Ապահովագրության Համամիութենական

Խորհրդի նախագահ՝ ԿՈՏՈՎ

Ի. տ. պաուքարտուգարի՝ ԼԵՄԿՈ

Հ Ր Ա Ն Ա Ն Գ

ԽՍՀՄ ԱՇԽԱՏԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ

1931 թ. հունիսի 10-ից, № 187.

Ժամանակավոր անաշխատունակության ու ապահովության լրացուցիչ տեսակի նպաստների, այլ և վարձու աշխատող թոշակառուների կենսաթոշակի հաշվարկումն ու վճարումը հիմնարկների և ձեռնարկների կողմից կատարելու մասին:

(Հրատարակված է ԽՍՀՄ ԿԳԿ-ի 1931 թ. հուլիսի 23-ից սոցիալական ապահովագրության մասին վորոշման 20-րդ հոդվածի հիման վրա: ԽՍՀՄ որենք. ժող. 1931 թ. № 41, հոդ. 283):

1. — Բոլոր պետական, կոոպերատիվ և հասարակական ձեռնարկներն ու հիմնարկները (նույն թվում արհեստագործական), անկախ իրենցում զբաղված գործավորների թվից, պարտավոր են կառավարել հաշվարկումն ու վճարումը:

ա) Ժամանակավոր անաշխատունակության նպաստների (հիվանդության, հաշմության, հղիության ու ծննդաբերության, կարանտինի կամ ընտանիքի հիվանդ անդամին խնամելու հետևանքով):

բ) Ապահովության լրացուցիչ տեսակի նպաստների (յերեխայի ու ծննդաբերի և ապահովագրվածի ու նրա ընտանիքի անդամների թաղման):

գ) Տվյալ ձեռնարկում կամ հիմնարկում վարձու աշխատող թոշակառուների կենսաթոշակները (հաշմանդամության, թերություն և յերկարամյա ծառայության կենսաթոշակ):

դ) Վճարման կայանի նախահաշիվով նախատեսված կազմակերպչական և այլ ծախսերը (յեթե տվյալ ձեռնարկում վճարման կայան կա):

Ծանոթություն. — Եթե ապահովագրական դեպքը տեղի չէ ունեցել վոչ ձեռնարկի կամ հիմնարկի դառնալով վայրում (որինակ գործուղման մեջ), — նպաստները կարող են վճարվել ապահովագրական գանձարկի կողմից բոտ ապահովագրվածի գտնված վայրի:

2. — Ժամանակավոր անաշխատունակության նպաստի վճարումը ձեռնարկներն ու հիմնարկները կատարում են մինչև աշխատունակության վերականգնման կամ հաշմանդամության հաստատման որը, բայց վոչ ավելի քան ժամկետից, վորի ընթացքում, համաձայն գործող որենսդրության, պահպանվում է տվյալ աշխատավորի տեղը:

Աշխատավորական հարաբերությունները լուծվելուց հետո, — նպաստների վճարումն անցնում է ապահովագրական գանձարկին:

3. — Նպաստների և կենսաթոշակների վճարումը կատարում է ինքը ձեռնարկը կամ հիմնարկը հիվանդանոցային թերթիկներով, կենսաթոշակի դրբույկի տալոններով և ապահովության լրացուցիչ տեսակների փաստաթղթերով, համաձայն սոցիալական ապահովագրության գործող կանոնների և հրահանգների: Այս դեպքում ապահովության լրացուցիչ տեսակների և կենսաթոշակների ստացումը իրավունքի սահմանումը կատարում է ապահովագրական

գանձարկը կամ վճարման կայանը (յեթե վերջինս կա տվյալ ձեռնարկում):

Այն վայրերում, ուր ապահովագրական գանձարկներն անցնում են լրացուցիչ տեսակի նպաստների բնականով վճարելուն, — բնականի վերածած նպաստի որդեգրները տալիս է ապահովագրական գանձարկը կամ վճարման կայանը:

Ձեռնարկներին և հիմնարկներին կանոններ և հրահանգներ մատակարարելը, — այլև նպաստների և կենսաթոշակների հաշվարկման և վճարման ընթացիկ աշխատանքների կարգով ծագած խնդիրների առթիվ հրահանգչությունը գրվում է սոցիալական ապահովագրության մարմինների վրա:

4. — Համաձայն ներկայացրած փաստաթղթերի, հատանքիք նպաստների և կենսաթոշակների գումարները ձեռնարկի կամ հիմնարկի կողմից դրվում են գործավորի անձնական հաշվում, այլև աշխատավարձի հաշվային տեղեկագրում (կամ նշանակված նպաստների և կենսաթոշակների հատուկ տեղեկագրում):

5. — Ժամանակավոր անաշխատունակության նպաստների և կենսաթոշակների վճարումը ձեռնարկներն ու հիմնարկները կատարում են աշխատավարձի վճարման հետ միաժամանակ, բացառությամբ այն դեպքերի, յերբ համաձայն սոցիալական ապահովագրության կանոնների, — նպաստը պետք է վճարվի առաջուց՝ բժշկությունը մշտական բնակավայրից դուրս նշանակելու հետևանքով:

Ապահովության լրացուցիչ տեսակի նպաստների վճարումը կատարվում է անկախ աշխատավարձը վճարելու ժամկետներից, լրացուցիչ նպաստները վճարելու համապատասխան կանոններով նախատեսված ժամկետներին:

Վճարած նպաստների և կենսաթոշակների գումարները դրվում են բանկորի հաշվեգրքույկում:

6. — Առանց բացառության վճարման համար ներկայացրած բոլոր փաստաթղթերը (հիվանդանոցային թերթիկներ, կենսաթոշակի դրբույկի տալոններ և ապահովության լրացուցիչ տեսակների փաստաթղթեր) սխիտ հանձնվեն ապահովագրական գանձարկին կամ վճարման կայանին (յեթե վերջինս կա տվյալ ձեռնարկում):

Փաստաթղթերը հանձնվում են հետևյալ ժամկետներին.

ա) Ամսվա առաջին կեսի ընթացքում ներկայացրածները — մինչև առաջին 18-ից.

բ) Ամսվա յերկրորդ կեսում ներկայացրածները—վոչ ուչ հե-
տեվյալ ամսի 3-ից: Հանձնումը կատարվում է այդ ժամկետներից
վոչ ուչ, թեկուզ այդ փաստաթղթերով գործավորներին վճարումը
գեո կատարած ել չլինի:

Փաստաթղթերը հանձնվում են տեղեկանքի հետ, վորում նը-
վում են թե քանի՝ փաստաթուղթ է հանձնվում և ի՞նչ գումարի:

7.— Ապահովագրական դանձարկղին կամ վճարման կայանին
հանձնվելիք փաստաթղթերը—հիվանդանոցային թերթիկները, կեն-
սաթոշակի զբոսայինները, ապահովության լրացուցիչ
տեսակների փաստաթղթերը պիտի ձեռնարկի կամ հիմնարկի կող-
մից նախորդ մարվեն (Ջնջելու, շտամպ գնելու միջոցով և այլն):

Իրեն՝ գործավորի ստորագրությունը նպաստը կամ կենսաթո-
շակին ստանալու պարտադիր է:

8.— Հաշվական տեղեկագրի կամ հատուկ տեղեկագրերի մեջ
մտցրված նպաստների և կենսաթոշակների գումարները (անկախ
նրանց փաստացի վճարելուց), այլև վճարման կայանի նախահաշ-
վով հաստատված կազմակերպչական և այլ ծախքերը,—ձեռնարկը
կամ հիմնարկը պահում են հաստանելիք ապահովագրական Բու-
ժանքներից:

Ապահովագրական մուծանքներից պահված նպաստների և կեն-
սաթոշակների գումարները պիտի համապատասխանեն փաստա-
թղթերը նեկայացնելու ժամանակ հիմնարկի կամ ձեռնարկի ներ-
կայացրած տեղեկանքներում նշված գումարներին (ամսվա I և
II կեսի համար, հոդ. 6):

Բայց, յեթե փաստաթուղթը վճարման համար ներկայացնելու
օրից հաշված, նպաստը կամ կենսաթոշակը վեց ամսվա ընթաց-
քում չվճարվեն,—ձեռնարկը կամ հիմնարկն ապահովագրական
մուծանքի հերթական վճարման ժամանակ վերադարձնում է չպա-
հանջված գումարը ապահովագրական դանձարկղին պատշաճ տե-
ղեկանքի հետ միասին:

9.— Ընդհանուր պետական և տեղական բյուջեյում գտնվող
և ապահովագրական մուծանքների համար ինքնուրույն հաշվար-
կումներ չունեցող հիմնարկները նպաստների և կենսաթոշակների
վճարումները կատարում են ի հաշիվ աշխատավարձի վարկերի:

Այդ հիմնարկների վճարած նպաստն ու կենսաթոշակը ծած-
կվում են ԽՍՀՄ Ֆինոդղկոմատի, Պետբանկի և ԽՍՀՄ Աշխտոդկո-
մատի Սոցապկենտօվարչության 1931 թ. հունվարի 5-ից № 60 ժա-
մանակավոր անաշխատունակության նպաստը ձեռնարկներին և

հիմնարկներին կողմից վճարելու մասին չրջաբերականի կարգով
(ԽՍՀՄ Աշխտոդկոմատի տեղեկատու 1931 թ. № 8):

Այս դեպքում բյուջեյատային տարվա վերջին ամսում վճարած
նպաստների և կենսաթոշակների ծախքերը պիտի ապահովագրա-
կան դանձարկղները ծածկեն վոչ ուչ բյուջեյատային տարվա վեր-
ջին օրից:

Այն պեպքերում, յերբ ընդհանուր պետական կամ տեղական
բյուջեյում գտնվող հիմնարկները նպաստ և կենսաթոշակ վճարում
են աշխատի գործավորների, վորոնք աշխատավարձ ստանում են
աշխատի միջոցներից, ըստ վորոնց ապահովագրական մուծանքնե-
րի հաշվարկումը կենտրոնացված է (օրինակ՝ հատուկ միջոցներ,
վարկեր պետական բյուջեյով, բացի աշխատավարձի վարկերից,
վորոնք անցնում են ծախքերի 1 հոդվածով),—նպաստ և կենսա-
թոշակ տրվում է այդ նույն միջոցների հաշվին և տրված գումար-
ները պահվում են ապահովագրական մուծանքների հերթական վճա-
րումների ժամանակ:

10.— Ձեռնարկը կամ հիմնարկը հաշվելիս սխալվելու դեպքում,
ապահովագրվածին ավելի վճարված նպաստը և կենսաթոշակը կա-
րող են պահվել հետագա վճարումների ժամանակ:

Թերի վճարում հայտարերելու դեպքում, ապահովագրական
դանձարկղը կամ վճարման կայանը վճարման յենթակա գումարի
մասին նշանակում են տնում փաստաթղթերի վրա և առաջարկում
ձեռնարկին կամ հիմնարկին արված հաշվարկման համաձայն վճա-
րել այդ գումարը:

Հետ դանձելու կամ լրացուցիչ վճարելու մասին առաջարկու-
թյանները ձեռնարկվում են դրավոր կարճ առաջարկի ձևով՝
հասցեյադրված ապահովագրական դանձարկղի կամ վճարման կա-
յանի կողմից ձեռնարկին կամ հիմնարկին (առանց վերադարձնելու
փաստաթղթերի):

11.— Ապահովագրվածների բոլոր բողոքները նպաստների և
կենսաթոշակների սխալ հաշվարկման դեմ վերջնականապես լու-
ծում են տվյալ ձեռնարկի կամ հիմնարկի ապահովագրվածներին
սպասարկող ապահովագրական դանձարկղը կամ վճարման կայանը:

12.— Ապահովագրական մարմինները և նրանց վերստուգիչ
հանձնաժողովները կարող են ձեռնարկի և հիմնարկի վճարած
նպաստների և կենսաթոշակների հաշվարկման հետադուրում և
ստուգում կատարել: Վերջինները պարտավոր են նրանց հնարա-
վարություն տալ սողմելու բոլոր անհրաժեշտ փաստաթղթերով

(գործավորների անձնական հաշիվներ, տեղեկագրեր, դրամարկղի փաստաթղթեր և այլն) :

Նպաստների և կենսաթոշակների վճարման հաշվարկումների ճշտության ստուգում կարելի չէ կատարել վոչ ավելի քան մեկ գործատնական տարվա համար :

13.—Սույն հրահանգով նախատեսված բոլոր հաշվարկումներն ու վճարումները ձեռնարկներն ու հիմնարկները կատարում են այդ աշխատանքների համար ապահովագրական մարմիններից առանց մի վորյեվիցե հատուցում ստանալու :

14.— Համարվում են ուժը կորցրած .

ա) ԽՍՀՄ Աշխտողկոմատի և ԽՍՀՄ Հոգսողկոմատի 1930 թ. մայիսի 29-ի ԱԺԿ № 91 ժամանակավոր անաշխատունակության և լրացուցիչ տեսակի նպաստների վճարումը խորհրդային անտեսությունների գրասենյակների միջոցով կազմակերպելու մասին չբնագրականը (ԽՍՀՄ Աշխտողկոմատի տեղեկատու 1930 թ. № 19) :

բ) ԽՍՀՄ Աշխտողկոմատի և ԽՍՀՄ Ժողանոգերխորհի 1930 թ. հոկտեմբերի 23-ից № ԱԺԿ 325, ԺՏԳԽ—1512 ժամանակավոր անաշխատունակության նպաստների հաշվարկումն ու վճարումը հիմնարկներին և ձեռնարկներին հանձնելու մասին վսրոշումը (ԽՍՀՄ Աշխտողկոմատի տեղեկատու 1930 թ. № 29-30) :

գ) ԽՍՀՄ Աշխտողկոմատի և ԽՍՀՄ Ժողանոգերխորհի 1931 թ. մայիսի 20-ից № ԱԺԿ-ի—116 ժամանակավոր անաշխատունակության նպաստի հաշվարկումն ու վճարումը ձեռնարկներում և հիմնարկներում կատարելու առթիվ որոշումների պայմանագրի փոփոխությունների մասին վորոշումը (ԽՍՀՄ Աշխտողկոմատի տեղեկատու 1931 թ. 14-15) :

դ) Բոլոր պայմանագրերը և համաձայնությունները՝ կնքված ապահովագրական մարմինների և ձեռնարկների միջև (ՃՀԺԿ և ՄԺԿ և այլն) ժամանակավոր անաշխատունակության և ապահովության այլ տեսակի նպաստների հաշվարկումն ու վճարումն իրենց հանձնելու մասին :

ԽՍՀՄ Աշխատանքի ժողովրդական կոմիտեի տեղակալ՝
ԿՐԱՎԱԼ

ԽՍՀՄ Աշխտողկոմատի կոմիտեի անդամ՝ ԽՍՀՄ Աշխտողկոմատի կոմիտեի նախագահի պետ՝
ԿՈՏՈՎ



ՀՀ Ազգային գրադարան



44.128